



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ս. ԳՈՒԼԱՐՅԱՆ ՅԵՎ  
Ս. ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆ




**ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ  
ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ  
ՅԵՎ  
ԿԱՊԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

★

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՃԱՆՏՐԱՆՍԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1933





ՊԵՏԷՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավիտ 91425

Պատկեր 1226

Տիրաժ 3000

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՅԵՎ  
ԿԱՊԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տեղերում իսկական բայշեխկյան կենտրոն հանդիսացող խորհուրդների գերի և նշանակութեան բարձրացումը, կոյտնտեսական շարժման և քաղաքի ու գյուղի միջև արտադրական գործան գլխավորումը խորհուրդների կողմից, գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման գործում խորհուրդների մասնակցութեանը, խորհուրդների աներկրա շրջադարձը գեպի արտադրական խնդիրներն ու կոյտնաշարժումը, կոյտնտեսական արտադրութեան կազմակերպումը, ամրապնդումը, ֆինանսական-տնտեսական-քաղաքական կամպանիաների լավագույն իրականացումը՝ վորն հանդիսանում և կուսակցութեան և իշխանութեան կարևորագույն առաջադրանքը գյուղի և քաղաքի աշխատանքի ֆրոնտում բնդհանուր առմամբ կատարվում և հաջողութեամբ:

Մորհուրդներն այսօր մեծ մասամբ իրականացնում են լայն ձևանարկումներ՝ բարձրացնելու աշխատավորական մասսաների քաղաքական և կուլտուրական գարգացման մակարդակը: Նոր շինարարութեան, քաղաքի սոցիալիստական վերակառուցման, կոլեկտիվ ու խորհրդային անտեսութեաններում կատարվող շինարարութեան գծով՝ խորհուրդները միջոցներ են ձևաբանում աշխատավորութեանը լայն մասսաներին մասնակից անելու այդ աշխատանքներին:

Իրենց սպասարկած վայրի սահմաններում խորհուրդներն այդ ձևանարկումներն իրականացնում են իրենց առնթեր կազմակերպված սեկցիաների միջոցով՝

սեկցիաների, վորտեղ միացվում են խորհուրդների բո-  
լոր անդամների, բանվորների, գյուղի կոլտնտեսական  
և աշխատավոր մենատնտես լայն մասսաների աշխա-  
տանքը:

խորհուրդների և խորհրդային հասարակական ալ-  
տիվի գործունեության հիմնական ողակներն ու լծակ-  
ները հանդիսանում են խորհուրդների սեկցիաներն ու  
պատգամավորական խմբակները: խորհուրդներին կից  
կազմակերպված այդ սեկցիաներն խորհուրդների վեր-  
ջին ստուգատեսից հետո արդեն յենթարկված են վերա-  
կառուցման, վոր տալիս և հնարավորություն կանխե-  
լու նրանց դիմազրկումը, աշխատանքի զուգահեռակա-  
նությունը, ալտիվի ուժերի ավելորդ ծախսումը և խու-  
սափելու ավելորդ սեկցիաների և կամ հանձնաժողովնե-  
րի կազմակերպումից:

Այս բրոշյուրում սակայն մենք նպատակ չենք դրել  
արծարծելու խորհուրդների ձեռք բերած նվաճումները  
կազմ-մասսայական աշխատանքների բնագավառում  
կամ արտացոլել այդ ուղղությամբ գոյություն ունեցող  
բացերն ու թերությունները. մեր նպատակն և կոնկրե-  
տացնել և պարզաբանել ՀՄՈՀ կենտգործկոմի նախա-  
գահության ս. թ. փետրվարի 22-ի նիստում ընդունված  
խորհուրդներին կից ճանապարհա-տրանսպորտային  
և կապի սեկցիաների և տրանսպորտի ու կապի ձեռնար-  
կությունների պատգամավորական խմբակների կանո-  
նադրությունից բղխող կազմակերպչական խնդիրները,  
նրանց իրավունքների և պարտավորությունների սահ-  
մանները: Այս ձեռնարկման միջոցով նպատակ և դրված  
բարձրացնել քաղաքային և գյուղական խորհուրդներին  
առընթեք ճանապարհա-տրանսպորտային սեկցիաների  
աշխատանքի վորակը՝ 2-րդ հնգամյակի խնդիրների հա-  
մապատասխան:

Պետք և արձանագրել ճանապարհա-տրանսպորտա-  
յին և կապի սեկցիաների տնտեսական-քաղաքական բա-  
ցառիկ կարևորությունը ժողովրդական տնտեսության  
և մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման աշ-

խատանքի մէջ: Յեթե մինչև այժմ ճանապարհա-  
տրանսպորտային և կապի աշխատանքների ղեկա-  
վարութիւնը թե՛ գյուղում և թե՛ քաղաքում իրա-  
դրծովել և առանձին կամպանիաների միջոցով՝  
ներկայումս 2-րդ հնգամյակի մարտական տեմպերի  
և բարձր փորակի համար տարվող պայքարում այդ  
ձևը վոչ միայն ավելորդ, այլև վտանգավոր և: Ճա-  
նապարհա-տրանսպորտային աշխատանքների ղեկա-  
վարման ասպարիզում պետք է իրադրծել հետևողական  
սխառմատիկ և անընդհատ աշխատանքը:

Քաղաքային և գյուղական խորհուրդները ճանա-  
պարհա-տրանսպորտային և կապի աշխատանքը գլխա-  
վորելու և իրականացնելու համար պետք է կազմակեր-  
պեն ճանապարհա-տրանսպորտային և կապի սեկցիաներ:  
Սեկցիաների կազմում բացի քաղաքային և գյուղական  
խորհուրդների անդամ-թեկնածուներից՝ պետք է լայն  
չափով ներգրավել նույնպես խորհրդային աշխատանք-  
ներում ընդգրկված և այլ ձևանարկութիւնների բան-  
փորներին և քաղաքի ու գյուղի աշխատավորներին:

Նկատելի ունենալով, վոր մի շարք քաղաքային և  
գյուղական խորհուրդներին կից սեկցիաները գեոևս  
ամենուրեք չեն կազմակերպված, իսկ կազմակերպված-  
ները գեոևս չեն ամբաջվել, քաղաքային և գյուղական  
խորհուրդներն ստանալով այդ սեկցիաների կանոնա-  
դրութիւնը—պետք է վերանայեն սեկցիաները անդամ-  
ների ցուցակը և դասավորեն ուժերն, վոր այդ սեկցիա-  
ներն ապահովեն համապատասխան աշխատավորներով,  
սուանց խախտելու խորհրդի պատգամավորի ազատ իրա-  
ւունքը՝ սեկցիայի ընտրութիւնը կատարելու համար:

Սեկցիաները կազմակերպելուց հետո գումարել  
սեկցիայի ընդհանուր ժողով (պլենում) և սեկցիայի  
անդամներից ընտրել սեկցիայի բյուրո՝ 3—5 հոգու կազ-  
մով: Քաղաքներում և մեծ գյուղերում սեկցիայի բյու-  
րոյի կազմը կարելի յե հասցնել մինչև 7 հոգու:

Նկատի ունենալով այդ սեկցիայի աշխատանքի լայն ծավալը՝ ճանապարհա-տրանսպորտային և կապի սեկցիան ըստ տեղական պայմանների մասնագիտացնելով կարելի յե կազմակերպել յենթասեկցիաներ հետևյալ բնագավառների համար՝

1. Ավտո-սայլային տրանսպորտի .
2. Ճանապարհային շինարարութեան .
3. Կապի (փոստի) .
4. Յերկաթուղային տրանսպորտի .
5. Զրային տրանսպորտի :

Այնտեղ ուր ջրային և յերկաթուղային տրանսպորտը բացակայում ե վերջինների համար յենթասեկցիաներ չեն կազմակերպվում :

Կազմակերպչական աշխատանքը սրանով չի սահմանափակվում : Նկատի պետք ե ունենալ, վոր յուրաքանչյուր յենթասեկցիա իր գծով ունի բազմաթիվ բնագավառ՝ որինակ ճանապարհային շինարարութեան յենթասեկցիան . այդ յենթասեկցիան ընդգրկում ե իր մեջ հիմնական և նոր ճանապարհների կառուցումը, ընթացիկ և հիմնական վերանորոգչական աշխատանքը, կամուրջների կառուցումը և վերանորոգումը, խճի, ավազի և փայտի մատերիալների հայթայթումը և այլն . բնական ե, վոր նման բազմաթիվ խնդիրներին յենթասեկցիան կանոնավոր, բազմակողմանի և սիստեմատիկ դեկավարելու և ոժանդակելու գործում դժվարութեաների կհանդիպի : Այդ նպատակով անհրաժեշտ ե յենթասեկցիաներում ընդգրկվածներից կազմակերպել բրիգադներ, ըստ այդ առանձին բնագավառների : Կապի գծով պետք ե կազմակերպել բրիգադներ փոստի, հեռագրի, հեռախոսի, ռադիոյի, թերթերի տարածման, այլև նամակների, հեռագրեր, թերթեր և այլն դաշտում աշխատող բրիգադներին հասցնելու գործը դեկավարելու համար : Յերկաթուղային տրանսպորտում՝ բեռների տեղափոխութեան, բեռնաթափման, մարդատար գնացքների յերթևեկութեան հետևելու համար և

այն: Սակայն սեկցիաներն նկատի ունենալով այլալ  
աշխատանքի ծախսին ու մեծութունը՝ այդ դասավո-  
րումը պետք է կատարեն ըստ տեղական պայմանների ան-  
հրաժեշտութեան և նպատակահարմարութեան՝ կրճա-  
տելով, միացնելով կամ լայնացնելով բրիգադներն թի-  
վը: պետք է նկատի ունենալ, վոր յենթատեղակաների  
զեկավարները և բրիգադիրներն ընտրվում են սեկցիա-  
նների բյուրոսների կողմից:

Խորհուրդների յենթակա գյուղերում ինքնուրույն  
սեկցիաներ չեն կազմակերպվում, այլ կազմակերպվում  
և հսկիչ պոստ, վորի նախագահը ընտրվում է յենթակա  
գյուղի միասնական սեկցիայի կողմից:

Քաղաքային և գյուղական խորհուրդների հանա-  
պարհա-տրանսպորտային և կապի սեկցիաները և յեն-  
թատեղականերն իրենց աշխատանքն ավելի արդյունա-  
վետ դարձնելու, զեկավարման գործը լավ հիմքերի  
վրա դնելու, աշխատավորութեան կարիքներին ու աշխա-  
տանքին վերաբերող խնդիրներին, թերութեաններին,  
ու բացերին մոտիկից ծանոթանալու համար պետք է  
խորհրդային-մասսայական աշխատանքի նոր ձևեր և մե-  
թոդներ մշակեն, ոպտվելով մյուս սեկցիաների կողմից  
այդ ուղղութեամբ արդեն ձեռք բերած գրական և ար-  
դյունավետ փորձից: Վորպես որինակ պետք է կիրառել  
Լենինականի չրջանի Մոյլա-Մուսա գյուղխորհուրդի և  
սեկցիաների գրական փորձը: այսպես՝ սեկցիաների ա-  
ռանձին աշխատանքները և գիրեկտիվները թաղամասե-  
րում իրագործելու համար՝ կազմակերպել թաղամասա-  
յին բրիգադներ, սեկցիան պետք է ոպտվի նաև խոր-  
հրդի կողմից թաղային տերիտորյալ ստորաբաժանման  
և այդ թաղամասային տասնյակների կազմակերպման  
ձևից: կազմակերպվող սեկցիաներում և բրիգադներում  
կանանց ուժի ներգրավման համար պետք է գործնական  
աշխատանք տանել: լրիվ չափով պետք է սպահովել  
կանանց մասնակցութեանը սեկցիայի բոլոր ձևոնար-  
կումների և գործնական աշխատանքների մեջ:

Գործելով կանոնադրութեամբ իրենց տրված իրավունքների և սարտականութեանների սահմաններում— ճանապարհա—տրանսպորտային և կապի սեկցիաները պետք և նկատի ունենան, վոր կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը սահանջում են նրանցից վճռական միջոցառումներ բոլոր բնագավառներում աշխատանքը կոչման բարձրութեան վրա դնելու, պլանների կատարման համար պայքարելու, աշխատանքի վորակի կողմը ապահովելու և վորպես մասսաների իրական կազմակերպիչներ՝ պայքարելու ավտո—ճանապարհային տրանսպորտի առողջացման և վերակառուցման, ճանապարհային և կապի տնտեսութեան գործի բարելավման և հերթական բոլոր խնդիրների կատարման համար՝ հենվելով խորհրդային—բանվորական, կոլտնտեսական և քաղաքի ու գյուղի աշխատավորական կառիվի վրա:

Այդ նպատակով ճանապարհային—տրանսպորտային և կապի սեկցիաներն պետք և կատարեն կուսակցութեան և կառավարութեան առաջադրած բոլոր մարտական խնդիրները ճանտրանսի և կապի ձեռնարկումների ասպարիցում:

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ընկ. Պանջյանը կուսակցութեան Ց—րդ համադումարում՝ ՀԿ(Բ)Կ. Կենտկոմի հաշվետվութեան մեջ արձանադրելով ճանապարհային շինարարութեան թույլ տեմպերն Հայաստանում մատնանշել և, վոր «չըջանային և գյուղական որդանները թերադնահատում են ներքին միջոցների լայն մոբիլիզացիան՝ ոպորտունիստական ինքնահոսի թողնելով ճանապարհների շինարարութեան և նորոգման գործը»:

Միաժամանակ ընդդժելով ճանապարհային շինարարութեան անհրաժեշտութեանը ավտո—տրանսպորտի

յայնացման հնարավորութիւններն ավելացման համապատասխան՝ մատնանշել ե, վոր «յուրաքանչյուր շրջանում անապարհների դրութեանը շրջանային խորհրդային և կուսակցական դեկալարութեան, գյուղխորհուրդների, կոլտնտեսութիւնների աշխատանքի կարևոր մեկ վկայականն է լինելու»:

Այդ աշխատանքը, վորպես մեր ժողովրդական տնտեսութեան թույլ ողակ, պետք է հատուկ ուշադրութեան արժանանա. սեկցիան իր յենթասեկցիայի և բրիգադների միջոցով նախքան ճանապարհային գործի կազմակերպումը, պետք է նախորդ ստուգի տվյալ խորհրդի սահմաններում յեղած բոլոր ճանապարհների դրութեանը և կոնկրետ առաջարկներ ներկայացնի խորհրդին այս կամ այն ճանապարհը առաջին հերթի կառուցման կամ վերանորոգման պլանում անցկացնելու համար և ըստ հնարավորութեան համապատասխան մատնադետի կամ Հայճանտրանսի դիտանցիայի միջոցով կազմել տա այդ աշխատանքի համար պահանջվող կոնկրետ արդ-շին պլաններ:

Նույն կարգով հետևել ու հսկել առկա ճանապարհների պահպանութեան, ինչպես նաև հետևել ճանապարհային յերթի և անասուններ քշելու կանոնների կատարման վրա: Հսկել, վոր ճանապարհային կառուցումները լինեն վորակավոր և կառուցումների, վերանորոգումների ժամկետները, վորոնք պետք է հաստատված լինեն սեկցիայի կողմից, կատարվեն ժամանակին, հետևել ուղեմասի ըստ տասնյակների ճիշտ բաշխման, ազգաբնակչութեան ճանապարհային շինարարութեան մասնակցութեան ճիշտ կատարման, գործիքների պահպանութեան—հայթայթման և լրիվ ոգտադործման վրա, ինչպես նաև շինարարութեան համար բաց թողնվող միջոցների կանոնավոր ծախսման վրա:

Խորհրդային և կոլեկտիվ տնտեսութիւնների ուշադրութեանը հրավիրել իրենց ներքին և այն ճանապարհների շինարարութիւնների դրութեան և կառուցումների վորակի բարելավման վրա, վորոնք կոլտնտեսու-

թյունները և խորհանտեսությունների կարևորագույն ողակներն են հանդիսանում, ինչպես հանդամասերի հետ, այնպես էլ գլխավոր խճուղիների և գրունտային ճանապարհների, յերկաթուղային կայարանների—նա-  
վահանգստի հետ կապվելու համար:

Սեկցիայի աշխատանքի ուշադրությունից չպետք է վրիպի ճանապարհա-չինարարության վերաբերող և վոչ մի խնդիր՝ կամուրջների կառուցումը, վերանորոգումը, խողովակաչինարարությունը, ճանապարհները հեղեղումների վտանգից և ուժեղ անձրևների կործանումից պահպանելը, անկանոն ջրոգտագործման դեմ պայքար կազմակերպելը, ճանապարհային և կամրջային ու խողովակային շինարարությունը, հողաչինարարական և ջրաչինարարական աշխատանքների հետ կապելը (հատկապես բամբակացան շրջաններում) պետք է յինի յենթասեկցիայի աշխատանքի հիմնական մեթոդը: Բրիգադների միջոցով պետք է կազմակերպել աշխատավոր ձեռքերի և բանոց անասունների հավաքագրումը, կարգավորել ազգարձակչության աշխատանքային մասնակցության գործը նախագծված աշխատանքի մեջ, գործնական միջոցներ՝ ձեռք առնելով ճանաչինարարության որեկան պլանները վորակավոր կերպով կատարելու համար:

Ենթասեկցիայի և բրիգադների միջոցով պետք է հետևել և հայտնաբերել ճանապարհային տնտեսության վնաս հասցնողներին և կազմակերպել գործն այնպես, վորպեսզի վոչ մի չարարկություն առանց պատժի չմնա:

## ԿԱՊԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այս աշխատանքների վրա, վորպես ժողովրդաստեսության առաջավոր ճյուղի, հատուկ ուշադրություն պետք է նվիրել. կապի տնտեսությունը, չնայած ձեռք բերած նվաճումներին, չափազանց հետ է մնում ժողովրդական տնտեսության աճող վերելքից և մասսաների կուլտուր-կենցաղային հարաճուն պահանջնե-

րից: Կապի տնտեսութեան յենթասեկցիաների և բրի-  
զադների միջոցով աշխատանքը պետք է կազմակերպվի  
այնպես, վոր առավելագույն կերպով կատարվեն նա-  
խատեսված պլանները, բարելավվի այդ տնտեսութեան  
դժով ձեռնարկված աշխատանքը, լայն կերպով ծա-  
վալվի փոստային ցանցը, վորպեսզի ամենահեռավոր  
փայրերն ու անկյունները հնարավորութեամբ ունենան  
չըջանային կամ հանրապետական կենտրոնների հետ  
կապվելու:

Կապի տնտեսութեան ասպարիզում դեռևս գոյու-  
թյուն ունեն բազմաթիւ թերութեաններ. արձանագրու-  
ված են բազմաթիւ փաստեր նամակների «կորուստնե-  
րի», հեռագրերի ուշացման, թերթերի առաքման գոր-  
ծում գոյութեան ունեցող անկանոնութեանները, փոս-  
տային կապի անկանոն վիճակի, հեռագրային և հեռա-  
խոսային ընդհատումները, ռադիոների լուծեան դա-  
տապարտվելու մասին և այլն: Յեղել են դեպքեր, յերբ  
մի շարք չըջաններում և գյուղերում որերով և անգամ  
չարաթներով թերթեր և նամակներ չեն օտացել: Պարզ  
է, վոր այդ թերութեաններն արդեւո՞ք են գլխավորա-  
պես կապի ասպարատի անորակ աշխատանքին, այդ ասպա-  
րատում վորակավոր կադրերի պակասին և գլխավորա-  
պես նրան, վոր մինչև այժմ չըջգործկոմների, քաղա-  
քային, ավանային և գյուղական խորհուրդների կողմից  
այդ աշխատանքին անբավարար ուշադրութեամբ և  
դարձվում:

Ժողովրդական կապի աշխատանքի թերութեաննե-  
րը հարվածում են պրոլետարական պետութեան շահե-  
րին և հետևապես մեր ընդհանուր աշխատանքին:

Ճանապարհատրանսպորտային և կապի սեկցիանե-  
րը, կապի յենթասեկցիայի և բրիզադների միջոցով  
առանձնացնելով այդ տնտեսութեան աշխատանքի ա-  
ռանձին ընագավառը՝ պատշաճ ուշադրութեամբ պետք է  
նվիրեն այդ գործը պետք յեղած բարձրութեան վրա  
դնելու համար:

Այդ նպատակով (ըստ տեղական պայմանների)  
պետք է կազմակերպել հեռագրի, հեռախոսի, փոստի,

ուղիորդի բրիգադներ և այդ բրիգադների միջոցով այդ ասպարեզները աշխատանքը կոնտրոլի վերցնել և կազմակերպել գործն այնպես, վոր աշխատանքի յուրաքանչյուր բնագավառը ունենա իր կոնկրետ սլանն ինչպես նոր շինարարությունների ծավալման, յեղած դժերի վերանորոգման համար. քննել այդ սլանները և կոնկրետ առաջարկներ մտցնել նրանց վերաբերմամբ, տեղական պայմանների համաձայն և ներկայացնել սեկցիային ի հաստատություն:

Կազմակերպված բրիգադների միջոցով պետք է հսկել, վոր կանոնավոր պահպանվեն հեռագրի, հեռախոսի, ուղիորդի (եֆիրային և լաբային) ապարատներն, ինչպես նաև ժամանակին ու կանոնավոր բաժանվեն ստացված նամակները, ծանրոցները, թերթերն ու ժուրնալները, իսկ դաշտային աշխատանքների յեռուս չրջանում (գարնանացանի, աշնանացանի, բերքահավաքի) թերթերն ու նամակները հասցվեն դաշտում աշխատող կոլխոզնիկ և աշխատավոր մենատնտեսներին. ջոջվորական չրջաններում հատուկ բրիգադ պետք է կազմակերպել նամակները և թերթերը սար հասցնելու աշխատանքին հսկելու համար:

Կապի յենթասեկցիան պետք է հետևի, վոր հեռախոսի, հեռագրի, ուղիորդի սպասարկումից ոգտվող պետական-հասարակական կազմակերպությունները, կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները ժամանակին և կանոնավոր մուծեն այդ սպասարկման համար որենքով սահմանված դրամները և միջոցներ ձեռք առնի կուտակված պարտքերը լիկվիդացիայի յենթարկելու համար:

Ոժանդակել, վոր կապի փոխադրական միջոցները հեռագրա-հեռախոսային սյունները, ուղիորդի հանդուլցները պահպանվեն աչքի լույսի պես. հետևել, վոր ամենորյա փոստային կապը գյուղի և չրջկենտրոնի հետ պահպանվի կանոնավոր կերպով և ստացված թերթերը, նամակները, ծանրոցները և այլն բաժանվեն անմիջապես. այդ նպատակով սեկցիան պետք է ոժանդա-

կի կապի մարմիններին՝ կոլանտեսականներից և յենթասեկցիայի անդամներից փոստատարները համար լավագույն կադրեր վերցնելու գործին:

Ոժանդակել, վոր նոր շինարարությունները սլանն իրադործվի ժամանակին. ոչնեւ, վոր շինանյութերը (սյուներ, լարեր, մեկուսիչներ, ապարատներ և այլն) տեղափոխությունը կատարվի կանոնավոր կերպով և աշխատանքի վայրերում ու սահեատներում կենտրոնացվող այդ մատերիալները պահպանվեն խնամքով:

Ստուգել կապի աշխատավորների կադրերը, ոժանդակել նրանց վորակավորման գործին և այդ նպատակով կոնկրետ առաջարկներ ներկայացնել սեկցիային՝ խորհրդի միջոցով իրադործելու և անհարազատ ու դասակարգանորեն խորթ տարրերից այդ ապարատը մաքրելու համար:

### ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Այս ասպարիզում սեկցիայի անմիջական աշխատանքն է հանդիսանալու պայքար յերկաթուղային, ավտոմոբիլային և ջրային փոխադրությունների սլանավորման համար և հանդիպական փոխադրությունների դեմ:

Յերկաթուղային, ավտոմոբիլային և ջրային փոխադրությունների սլանավորումը տրանսպորտում տեղի ունեցող կորուստների դեմ պայքար մղելու միջոցներից և փոխադրական պրոցեսը ռացիոնալացման յենթարկելու նպատակով կատարվող ամենակարգու ձեռնարկումներից մեկն է:

Այդ նպատակով՝ ճանապարհատրանսպորտային և կապի սեկցիան տրանսպորտի համար պետք է կազմակերպի հատուկ յենթասեկցիա և ըստ տեղական պայմանների հատուկ բրիգադներ՝ յերկաթուղային, ջրային և ավտոմոբիլային գործին ոժանդակելու, նրանց աշխատանքը գլխավորելու, խորհրդի սահմաններում յեղած տրանսպորտի ձեռնարկությունների և այլ հիմ-

նարկությունների ու կազմակերպությունների կողմից տրանսպորտի հարցերի վերաբերյալ ղեկավար մարմինների և խորհրդի վորոշումները կատարելու նպատակով մասսայական վերահսկողության կազմակերպումը ապահովելու համար:

Ի՞նչ խնդիրների շուրջ պետք և ծավալին իրենց աշխատանքը տրանսպորտի յենթասեկցիան և տրանսպորտի զանազան դժով կազմակերպված բրիգադները:

Այս առթիվ կանոնադրության մեջ բազմաթիվ խնդիրներ կան առաջադրված: Անհրաժեշտ և միայն, վոր յենթասեկցիան և կազմակերպված բրիգադները մանրամասն ծանոթանան նրան ու դրանից յեյնելով կազմեն իրենց աշխատանքի պլանը:

Նրանց աշխատանքը պետք է վերակառուցվի այնպես, վոր տրանսպորտային ձեռնարկությունների և տնտեսական մարմինների ու կազմակերպությունների դժով կատարվող աշխատանքները՝ բրիգադների, յենթասեկցիայի, սեկցիայի ու համապատասխան խորհրդի նախաձեռնությամբ՝ կոնկրետ և ոպերատիվ ղեկավարությամբ և աջակցությամբ ողնեն տրանսպորտի առողջացման և վերակառուցման, հաստատեն իրական տնտեսաշարի, վերացնեն գնացքների, շոգենավերի և ավտոների դիմազուրկ յերթը և այդ փոխադրական միջոցների վերանորոգման աշխատանքները լավագույն կերպով և վորակավոր կատարվեն. հետևել և ստուգել տրանսպորտի կողմից վառելիքի յնայողությամբ ծախսելուն, տրանսպորտի գույքի և ինվենտարի լայ և յնամքով պահպանելուն, ճանապարհորդներին լայ սպասարկելուն՝ բեռների բարձման և բեռնաթափման աշխատանքը լայ դրության մեջ ղնելու համար. հայտնաբերել և պատասխանատվության կանչել տրանսպորտի աշխատանքը կազմալուծողներին և ոժանդակել տրանսպորտի ռացիոնալացման գործին. ողնել տրանսպորտի բանվորների նյութական, կենցաղային և կուլտուրական սպասարկման գործը բարեկարգ դրության մեջ ղնելու համար, ողնել նրանց համար հատուկ հո-

դամասերում ցանքսեր և բանջարանոցներ կազմակերպելու, նրանց բնակարանային պայմանները լավացնելու համար և այլն:

ՃԱՆԱՊԱՐՀԱ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԿԱՆ ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈՂ



Գյուղական վայրերում գյուղխորհուրդները քաղաքներում քաղխորհրդի համապատասխան բաժինները և ճանապարհա-տրանսպորտային և կապի սեկցիաները պետք է ունենան միասնական պլան: Սյդ սյունը պետք է մանրամասն քննվի սեկցիայի պլենումում և խորհրդի նախագահութեան կողմից հավանություն ստանալուց հետո, պետք է կատարվի ինչպես սեկցիայի նույնպես և բաժնի կողմից, սեկցիայի բյուրոյի՝ գյուղում Գ. Ս. -ի նախագահի՝ իսկ քաղաքում համապատասխան բաժինների վարիչների փոխադարձ պատասխանատվութեամբ:

Հատատված պլանի սահմաններում, սեկցիայի և յենթասեկցիայի յուրաքանչյուր սպեցառիվ բրիգադը պատասխանատու յե իր աշխատանքի համար:

Գյուղում գ. ի-ի նախագահը՝ իսկ քաղաքներում համապատասխան բաժինների վարիչները պատասխանատու յեն ամբողջ աշխատանքի համար և սեկցիայի այն վորոշումների համար, վորոնց դեմ նոքա չեն բողոքարկել:

Սեկցիայի բյուրոն այն մարմինը չե, վոր միայն վորոշումներ է հանում, կամ ստուգում է դրանց կատարումը: Աշխատանքի նոր սխեմով՝ սեկցիան և նրա բյուրոն վո՛չ միայն վորոշում և ստուգում, այլև, յեթե գ. ի-ի կամ քաղխորհրդի համապատասխան բաժինների ապարատներն ի վիճակի չեն կատարելու այն՝ պետք է անմիջապես կատարեն իրենց վորոշումները: Փոխադարձ պատասխանատվությունը՝ միասնական պլանը կատարելու համար՝ կհարկադրի սեկցիայի բյուրոյին, գ. ի-ի նախագահին և քաղաքներում համապատասխան

բաժինները վարելիքներին՝ հսկել իրար, վիճելի հարցերը ժամանակին խորհրդի քննութեան դնել, ահազանդ տալ, յերբ զ. խ. — ի կամ համապատասխան բաժինների ապարատում, սեկցիայում, յենթասեկցիայում և բրիգադներում այս կամ այն աշխատանքը կազմում ե:

Սեկցիայի բյուրոն ղեկավարելով սեկցիայի ամբողջ աշխատանքը, պեաք և կարողանա ուսումնասիրել սեկցիայի անդամների և ներդրավածների կազմը և կատարել ու դասավորել նրանց աշխատանքի բեռնավորումը. կուրելով և անհատական առաջադրութեան տա աշխատանքին մասնակցողներին և կատարել ու ստուգել վերջիններիս կողմից այդ հանձնարարութեանների կատարման վորակական և քանակական ցուցանիշները և սահմանի հանձնարարութեանների կատարման համար հատուկ ժամկետներ:

Սեկցիաների բյուրոնների համար ներկա ետապի պահանջների տեսակետից հիմնական աշխատանքը կայանում է նրանում, վոր նրանք կարողանան կազմ-մասսայական մեթոդները և ձևերը լրիվ կերպով կենսագործել կյանքի մեջ. այդ մեթոդներն ու ձևերը մանրամասն կերպով թվարկված են սեկցիայի կանոնադրութեան մեջ. անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի լավ հիմունքների վրա դրվեն աշխատանքի բրիգադային ձևերն և հայանարբերվի սեկցիան նախածեռնութեան տրանսպորտային և կապի սեկցիաների աշխատանքի նոր և ավելի լավագույն ձևերն ու մեթոդները գտնելու համար:

Մենք թեև կոխել ենք Չ-րդ հնգամյակի առաջին տարին: 33 թ. ժողովրդական անտեսութեան կապի և տրանսպորտի սլանների իրադարձումը պահանջում է մեզանից ուժերի հսկայական լարում: Այն հարուստ փորձը և խնդիրները, վորոնք առաջադրված են կապի և տրանսպորտի սեկցիաների համար հաստատված կանոնադրութեամբ, անհրաժեշտ է, վոր կուսակցական կազմակերպութեանները, խորհրդային մարմինները մինչև

վերջն ուղտագործեն և անհրաժեշտ ձեռնարկումների միջոցով այդ սեկցիաների աշխատանքների մեջ առաջ բերեն վճռական բեկում, լայնորին ծավալելով աշխատանքի սոցիալիստական նոր ձևերը՝ սոցմրցում, հարվածայնություն, բուքսիւրներ և այլն:


Վերջապես անհրաժեշտ է ըայլչեիկյան վճռակա-նությամբ իրադործելու ընկ. Ստալինի 6 պատմական ցուցմունքները սեկցիաների, յենթասեկցիաների և բրիգադների աշխատանքների բոլոր բնագավառներում:

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ներկա շրջանում շրջադարձը դեպի տրանսպորտի և կապի տնտեսություն, խնդիրները պահանջում են, վոր խորհուրդները սերտ կապ հաստատեն տրանսպորտի՝ յերկաթուղային կայարանների, դեպոնների, վերանորոգող արհեստանոցների, Հայճանտրանսի դիստանցիանե-րի, ուղեմասերի և կապի տնտեսության փոստ հեռա-զրատան, ռադիո հանգույցների և այլ հիմնարկ-ձեռնարկների հետ:

Իրա համար անհրաժեշտ է տրանսպորտի և կապի հիմնարկների մեջ ստեղծել և ամրացնել խորհուրդների ստորին ըջիջները՝ պատգամավորական խմբակները: Պատգամավորական խմբակները վերոհիշյալ հիմնարկ-ձեռնարկներում պետք է դառնան խորհուրդների իսկա-կան հենակետը, նրանց մասսայական մարմինը, վորի միջոցով պետության կառավարման գործին մասնակից են արվում տվյալ ձեռնարկի աշխատավորների ամբողջ կուլեկտիվը:

ՀՄՍՀ-ի Կենտգործկոմի Նախագահության 1933 թ. փետրվարի 22-ի նիստում հաստատված տրանսպորտի և կապի ձեռնարկությունների պատգամավորական խմբակների կանոնադրությունը, վորտեղ ռահմանա-դրված և ձևակերպված են պատգամավորական խմբակ-ների իրավունքներն ու պարտականությունները



1824 II  
78934  
426684

տալիս ե միաժամանակ նրանց աշխատանքների ձեւերն ու մեթոդները:

Այս կարևոր դործի համար, հիմք ունենալով հրապարակված կանոնադրութիւնը, մեր քաղաքային խորհուրդները, շրջադրձկոմները և դյուղական խորհուրդները պետք ե նախաձեռնեն արանսպորտի և կապի բոլոր հիմնարկ-ձեռնարկներում կազմակերպելու և ծավալելու սլատղամամփորական խմբակներ, վորպես խորհուրդների մասսայական աշխատանքների կենսունակ և լավադուն ձև:

Պատգամավորական խմբակների կազմակերպման ժամանակ պետք ե նկատի ունենալ հետևյալ հիմնական մոմենտները.

1. Խմբակներ կազմակերպել արանսպորտի և կապի այն բոլոր ձեռնարկներում, վորտեղ կան քաղաքային, շրջանային կամ դյուղական խորհրդի ասնվազն յերեք անդամ կամ վորխանդամ:

Խորհրդային խմբակը, հանդիսանալով խորհրդային մասսայական աշխատանքների կազմակերպիչը, նրա կազմի մեջ պետք ե մտնեն բացի վերոհիշյալներից նաև հասարակական կազմակերպութիւնների ղեկավարները (ընկերական և արտադրական դասարանի անդամները, պատի թերթի խմբկոլի կազմը և այլն), խորհրդային ակտիվը և հարվածային բանվորները և աշխատակիցները: Այս ամենը միասին կազմում են պատգամավորական խմբակի պլենումը. խմբակի անդամները պլենումում վայելում են վճռական ձայնի իրավունք: Պլենումը ընտրում ե յերեքից հինգ հոդուց քաղկացած բյուրո, յեթև խմբակի անդամների թիվը 10 հոդուց պակաս չե:

Բյուրոյի խնդիրներն են՝ պարբերաբար հրավիրել խմբակի պլենումներ և պատրաստել նրա որակարգի հարցերն ու նյութերը, մշակել խմբակի աշխատանքի սլանը, անպայմանորեն համաձայնեցնելով այն համապատասխան կազմակերպութիւնների հետ և ստուգել

խմբակի պլենումների բյուրոյի վորոշումների կատարումը:

Սմբակի բյուրոն պետք է նախաձեռնի աշխատանքների բոլոր բնագավառների համար կազմակերպելու բրիգադներ վորպես աշխատանքների ճիշտ և արդյունավետ մեթոդ. բրիգադները աշխատանքների ընթացքում իրենց շուրջն են համախմբելու խորհրդային աշխատողների լավագույն ակտիվը:

Սորհրդային խմբակները նպատակ պետք է դնեն իրենց գործնական աշխատանքների միջոցով իրականացնելու հետևյալ միջոցառումները.

Կազմակերպել տվյալ հիմնարկ-ձեռնարկի բանվոր-ծառայողների ակտիվությունը՝ տեխնիկային տիրապետելու՝ արդշին պլանների քանակական և վորակական ցուցանիշներն իրականացնելու համար: Պետք է կազմակերպեն մասսայական փաստական հսկողություն, վորպեսզի ժամանակին և լրիվ կատարվեն կուսակցության և կառավարության դիրեկտիվները, առաջին հերթին տվյալ ձեռնարկության անտեսական գործունեյության ընթացքում:

Մյուս կողմից խմբակները պետք է գործնական աջակցություն ցույց տան խորհուրդներին՝ տվյալ ձեռնարկության բանվորների կուլտուր-կենցաղային կարիքներն սպասարկելու և նրանց մատակարարումը բարելավելու համար:

Ամբապնդել խորհուրդների և ընտրողների լայն մասսաների միջև ամենորոյա սերտ կապ, ինչպես նաև տվյալ ձեռնարկի բանվորներից պատրաստել խորհրդային վարչական աշխատակիցների կադրեր (սոց. համատեղիչներ, խորհուրդների արտահաստիքային հրահանգիչներ, վորևե ձեռնարկի դիրեկտորի տեղակալ և այլն):

2. Պատգամավորական խմբակը տվյալ ձեռնարկ-հիմնարկի արդՖինպլանների կատարման նպատակով մորբիլիզացիայի յե յենթարկում խորհրդային վորջ

ակտիվը, լայն կերպով ծավալելով սոցմրցումն ու հար-  
վածայնությունը:

Պատգամավորական խմբակները գործնականապես  
մասնակցում են ձեռնարկի պլանների մշակմանը և այն  
բոլոր կոնկրետ ձեռնարկումներին, վորոնք արվում և  
դիրեկցիայի և տեղական կազմակերպությունների  
կողմից:

Խմբակը մասնակցում և տվյալ ձեռնարկի ներքին  
միջոցների մոբիլիզացիայի, արտադրության պլանա-  
վորմանը, բանվորական ուժի ռացիոնալ ոգտագործ-  
մանը, արտադրության մեջ կանանց և յերիտասարդու-  
թյան ներգրավելու վերաբերյալ ձեռնարկումներին:

Խմբակի բյուրոն տվյալ ձեռնարկի խորհրդային  
ակտիվի և վողջ բանվոր աշխատավորների ուշադրու-  
թյունն է բևեռում աշխդիսցիպլինան ամբապնդելու,  
գործալքումներն ու հոսունությունը նվազեցնելու և  
բանվորական որը խտացնելու շուրջը:

Խորհրդային մասսայական աշխատանքներ ծավա-  
լելու բնագավառում, խմբակը նախաձեռնում է մի շարք  
կոնկրետ գործնական աշխատանքներ՝ ընտրողների ժո-  
ղովներում քննության և առնում պատգամավորների  
հաշվետու գեկուցումները, կազմակերպում է խմբակի  
անդամների հերթապահություն՝ ընտրողների դիմում-  
ներն ու բողոքներն ընդունելու, ինչպես նաև ձեռնարկ-  
հիմնարկներում կազմակերպում է խորհուրդի նախա-  
գահության անդամների ընդունելության օրեր:

Խորհրդային խմբակը պրոֆմիությունների հետ  
միասին դեկավարում է արտադրական-ընկերական դա-  
տարանների աշխատանքները, միջոցներ է ձեռք առնում  
բարձրացնելու ժողովրդական ատենակալների և հասա-  
րակական մեղադրողների վորակը:

Խորհրդային խմբակը պետք է աջակցի և ոգնի գյու-  
ղերի նկատմամբ տվյալ ձեռնարկի կատարվող շեֆական  
աշխատանքներին, սերտ կապ հաստատի կոլտնտեսու-  
թյունների հետ, խորհրդային վողջ ակտիվը ներգրա-  
վելով այդ աշխատանքների մեջ:

3. Խորհրդային խմբակներն իրենց առաջ դրված խնդիրներն իրականացնելու նպատակով, խորհրդային ակտիվից պետք է կազմակերպեն հարվածային բրիգադներ, հասարակական բուքսիւրներ, անցկացնելով թե՛ առանձին զեպքերում և թե՛ սլանային կարգով հետադուռություններ, ինչպես նաև մորթիլիզացիայի յենթարկելով տվյալ հիմնարկ-ձեռնարկի խորհրդային վոդլ ակտիվը, ընթացիկ քաղաքական-տնտեսական և մասսայական կամպանիաները հաջողությամբ անցկացնելու համար:

Պատգամավորական խմբակների ամբողջ աշխատանքը պետք է վերակառուցել, հիմք ունենալով խորհրդային աշխատանքների ուժեղացումը՝ սոցիալիստական շինարարության ընթացիկ տեմպերի համաձայն: Խմբակները լայն չափով պետք է դործնականապես ողնեն խորհուրդներին, նրա բաժիններին ու սեկցիաներին, ինչպես նաև ձեռնարկ-հիմնարկի կազմակերպություններին, այն բոլոր խնդիրների իրականացման շուրջը, վոր դրված է տվյալ հիմնարկ-ձեռնարկի առաջ: Միաժամանակ պատգամավորական խմբակները պետք է աշխատեն սերտ և փոխադարձ կապ պահպանել խորհրդի սեկցիաների հետ՝ վորպես խորհրդի մասսայական հիմնական ողակի. վերջինները, այդ խմբակների միջոցով իրականացնում են իրենց կապն ու ոժանդակությունը տվյալ ձեռնարկության նկատմամբ:

Խորհուրդների պլենումի, նախագահության և սեկցիաների նիստերում՝ ձեռնարկության արդֆինալանի կատարման վերաբերյալ զեկուցումներ քննելու ժամանակ անպայման պետք է լսվի նաև պատգամավորական խմբակների հարակից զեկուցումը՝ սլանները կատարմանն իրենց կողմից ցուցաբերած աջակցության մասին:

Խմբակները կապ են հաստատում այլ ձեռնարկությունների խմբակների հետ, ուղարկում են նրանց լուծելու այնպիսի հարցեր, վորոնցից կախված է տվյալ ձեռնարկության արդֆինալանի քանակական-վորակական ցուցանիշների կատարում:

4. Պատգամավորական խմբակը, վորպէս խորհրդի ստորին բջիջ, ղեկավարվում ե համապատասխան խորհրդի նախագահութեան կողմից: Այդ ղեկավարութեան իրականացում ե պատգամավորական խմբակներէ բյուրոներէ նախագահներէ, խմբակներին ամրացված հաստիքային և արտահաստիքային հրահանգիչներէ պարբերական խորհրդակցութեաններ հրավիրելով, նաև խորհրդի նախագահութեան նիստերում առանձին խմբակների զեկուցումները քննարկելով և այլն:

Ձեռնարկութեան աշխատանքների վերաբերյալ խմբակի վորոշումները իրականացնում ե ձեռնարկի վարչութեանը, յետե դրան չի առարկում հիմնարկի ղեկավարը: Խմբակի և վարչութեան մեջ առաջացած վեճերը լուծում ե համապատասխան խորհրդի նախագահութեանը, վորի վորոշումները վերջնական են կողմերի համար:

Խորհրդային-հասարակական ողակների՝ սեկցիաների, պատխմբակների կառուցվածքը և անելիքները պարզորեն ձևակերպված են հավելվածում կցված կանոնադրութեաններում:


Մենք մեր բրոշյուրում ավինք այդ կանոնադրութեան հիմունքները, այդ Խորհրդային-հասարակական ողակների անելիքների ընդհանուր պատկերը:

Մեր բանվորական, կոլտնտեսական, աշխատավորական ակտիվը, իր ենտուզիագմով, անձնվերութեամբ այդ իրավունքները, կանոնադրութեանները կդարձնի իրական գործ, հաղթանակորեն ավարտելու կուսակցութեան և իշխանութեան առաջադրութեանները՝ ճանտրանսպորտի և ժողկապի անտեսութեան ասպարիզում:

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲԱՂԱԲԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻՆ ԿԻՑ  
ՃԱՆԱԴԱՐԿԱ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՅԵՎ ԿԱՊԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ ՆԱ-  
ԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 23 ՓԵՏՐՎԱՐԻ 1988 թ.  
ՆԻՍՏՈՒՄ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹ. № 5/50)



## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

ԲԱՂԱԲԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ  
ԿԻՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՆՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՅԵՎ ԿԱՊԻ  
ՍԵԿՑԻԱՆԵՐԻ

### 1. Ճանապարհա-տրանսպորտային սեկցիաների կազմակերպչական խնդիրները

1. Ճանապարհա-տրանսպորտային և կապի սեկցիաները կազմակերպվում են ՀՍՍՀ բոլոր քաղաքային և գյուղական խորհուրդներին կից և միացնում են խորհրդի անդամներին և խորհրդային աշխատանքներում ընդգրկված տրանսպորտի, ճանապարհային և այլ ձեռնարկությունների բանվորներին, կոլտնտեսականներին և քաղաքի ու գյուղի աշխատավորներին:

2. Սեկցիաների ամենօրյա աշխատանքը ղեկավարելու համար սեկցիայի ընդհանուր ժողովում խորհրդի անդամներից ընտրվում և բյուրո բաղկացած 3-ից մինչև 7 հոգուց: Նախագահի և սեկցիայի բյուրոյի անդամների աշխատանքը համարվում և հիմնական հասարակական բեռնավորում:

3. Սեկցիայի բյուրոյի պարտավորություններն են՝

ա) Սեկցիայի աշխատանքների անմիջական ղեկավարումը,

բ) Սեկցիայի անդամների և ներգրավվածների կազմի բեռնավորման հաշվառումը,

գ) Սեկցիոն աշխատանքի մասնակցողներին անհատական և կոլեկտիվ առաջադրություններ տալը և վերջիններին վորակի և կատարման ժամկետների հաշվառումը, դ) սեկցիայի ընդունած վորոշումների կենսադործումը և նրա աշխատանքի արդյունքների հաշվառումը, յե) խորհրդային մասսայական աշխատանքի

նոր ձևերի և մեթոդների ուսումնասիրությունը և կիրառումը, դ) Սեկցիայի աշխատանքի սլլանների կազմելը, ե) Ընդհանուր ժողովների գումարումը, ը) Պորհրդի նախագահության, պատգամավորական խմբակների և տեղական, կուսակցական, արհմիութենական, տնտեսական և կոոպերատիվ հիմնարկների և կազմակերպությունների հետ կապ պահպանելը:

4. Սեկցիայի աշխատանքի ընդհանուր ղեկավարումըն իրագործում է քաղաքային և գյուղական խորհուրդների նախագահությունը, սեկցիաների կատարած աշխատանքի հաշվետվությունը լսելու, բյուրոյի հրահանգչական խորհրդակցությունների գումարման միջոցով և այլն:

5. Սեկցիոն աշխատանքի ծավալի և մասնակցողների քանակի համեմատ ճանապարհատրանսպորտային սեկցիաները բաժանվում են յենթասեկցիաների, յերկաթուղային տրանսպորտի, ջրային տրանսպորտի, ավտո-սայլային տրանսպորտի, ճանապարհային շինարարության և կապի:

Յենթասեկցիաներում կազմակերպվում են մշտական բրիգադներ սիստեմատիկորեն սպասարկելու յենթասեկցիաների աշխատանքի առանձին բնագավառները, բեռների տեղափոխության, մարդատար զնացքների յերթեկեկության, ճանապարհների կառուցման և վերանորոգման, փոստ-հեռադրական, հեռախոսի, ուղիոյի վերաբերյալ և այլն:

Յենթասեկցիաների ղեկավարներն և բրիգադներն ընտրվում են սեկցիաների բյուրոների կողմից:

6. Սեկցիաների առաջարկությունները քաղաքային և գյուղական խորհուրդների բաժինների տրանսպորտային, ճանապարհային և այլ ձեռնարկությունների, տնտեսական և կոոպերատիվ հիմնարկների և կազմակերպությունների համար պարտադիր են՝ վերջիններիս կողմից առարկություններ չլինելու դեպքում, տարածայնության դեպքում վիճելի հարցերը տեղափոխվում են խորհրդի նախագահության քննության:

## 2. Ճանապարհա-տրանսպորտային սեկցիաների խնդիրները.

7. Ճանապարհա-տրանսպորտային և կապի սեկցիաները պետք է հանդիսանան մասսաների իսկական կազմակերպիչները՝ յերկաթուղային, ջրային և ավտո-ճանապարհային տրանսպորտի առողջացման և վերակառուցման գործում, ճանապարհային և կապի տնտեսության գործում, նաև այն հերթական խնդիրները կատարման համար, վորը կուսակցությունը և կառավարությունն են առաջադրել այդ բնագավառում, հենվելով խորհրդային, բանվորական, կոլտնտեսական, քաղաքի և գյուղի մյուս աշխատավորների ակտիվի վրա: Ճանապարհա-տրանսպորտային սեկցիաներն իրենց առաջ դնում են հետևյալ հիմնական խնդիրները՝

### Ճանապարհային շինարարության և կապի բնագավառում.

8. Տվյալ խորհրդի սահմաններում յեղած բոլոր ճանապարհների գրության վերանայումը:

9. Նոր ճանապարհա-շինարարության վորակի և կատարման ժամկետների վերանայումը:

10. Գործնական ոգնություն հասցնել ճանապարհա-շինարարական և վերանորոգող կազմակերպություններին՝ կառավարական կարգադրությունների կենսագործմանը, շինարարության աշխատանքում աղգաբնակչության մասնակցության, բանվորական ուժի համալրումն, շինարարական և վերանորոգություն կատարող բանվորների նյութական-կենցաղային պայմանների բարելավման, նորակառույցները քանդումից պահպանելու, գույքը և ինվենտարը հափշտակումներից պաշտպանելու միջոցով և այլն:

11. Տվյալ խորհրդի սահմաններում յեղած ճանապարհների պահպանման կազմակերպումը, ճանապարհային յերթի և անասուններ քշելու կանոնների կատարման հսկողությունը՝ ճանապարհները ուժեղ անձրևներ

րի կործանումից պահպանելը գետերի վարարման ժամանակ, կամ թե չե անկանոն ջրատապաղործումից: Անհապաղ միջոցներ ձեռք առնել՝ կանխելու ճանապարհների փչացումը կամ թե դրանք վերանորոգելու:

12. Հայտնաբերել և պատասխանատու թշյան կանչել նրանց, վորոնք վնաս են հասցրել ճանապարհային տնտեսության:

13. Մորելիզացիայի յենթարկել կոլտնտեսականների և խորհտնտեսությունների ուշադրությունն այն ճանապարհների վորակի բարելավման վրա, վորոնք կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները կապում են հիմնական ճանապարհային գծերի հետ (կայարաններ, նավահանգիստներ, խճուղիներ, փոստային ճանապարհ և այլն): Պատգամավորական խմբակների աշխատանքի ղեկավարումը կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում ճանապարհային տնտեսության առողջացման գործում:

14. Պորհրդի կողմից սպասարկվող ամբողջ բնակչության ուշադրությունը գրավել և ուժերի մորելիզացիա կատարել այն խնդիրների շուրջը, վորոնք գրված են ճանապարհային տնտեսության բարելավման և վերակառուցման բնագավառում. տեղական նշանակություն ունեցող ճանապարհների նոր շինարարության և վերանորոգման անմիջական կազմակերպումը:

15. Ճանապարհային շինարարության համար բաց թողնվող միջոցների կանոնավոր ծախսման հսկողությունը:

16. Միտեմատիկ հսկողություն կապի այն մարմինների աշխատանքների վրա, վորոնք գտնվում են գյուղխորհուրդների սահմաններում և նրանց գործնական ոգնություն ցույց տալը սղղաբնակչության առավելագույն չափով սպասարկելու համար:

17. Կապի ձեռնարկություններում արդժինսպլանի կատարման կազմակերպելը, կենսագործելն աշխատանքի սոցիալիստական ձևերի, մեթոդների, կապի մար-

մինների և ձեռնարկությունների աշխատանքների պլանների մշակման մասնակցելը:

Տեղեֆոնիզացիայի, սաղիոֆիկացիայի, ողակային փոստի սպասարկման պլանների մշակումը գյուղխորհուրդի սահմաններում՝ լրագիրը, զբքերը և այլ թղթ-թակցությունները ժամանակին տեղ հասցնելու և փոխադրելու վրա հսկելը, հատկապես գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, արտադրական վայրերում և բրիգադներում:

Աջակցել կապի մարմիններին նամակատարներ և այլ աշխատակիցներ վարձելիս, ինչպես նաև նրանց աշխատանքների բարելավման:

### Տրանսպորտի բնագավառում

18. Մասսայական վերահսկողություն կազմակերպել թե խորհրդի սահմաններում յեղած տրանսպորտային ձեռնարկությունների և այլ հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից տրանսպորտի հարցերի վերաբերյալ ղեկավար մարմինների հրահանգները և խորհրդի վորոշումները կատարվում են թե վո՞չ:

19. Գործնական ուղնություն ցույց սալ տրանսպորտային ձեռնարկություններին և կազմակերպություններին՝ արանսպորտի առողջացման և վերահատուցման գործում իրական անտեսական հաշվարքի հաստատման, դնացքների դիմադրիկյալ յերթի վերացման, շոգեշարժերի, վազոնների, շոգենավերի վերանորոգման լավագույն կազմակերպման և պայքարի «պատահարների», տրանսպորտային միավորների պարապուրդների, միջոցների, նյութերի և վառելանյութերի աննպատակ ծախսման դեմ, գնացքների գուղերթին, տրանսպորտային գուլքին և ինվենտարին զգաստ վերաբերմունք ցույց տալու, ճանապարհորդներին լավ սպասարկելու, բեռնավորման և բեռնաթափման աշխատանքների լավագույն դրության համար պայքարելու հիման վրա և այլն:

20. Տրանսպորտի բանվորների և ծառայողների

ուչադրությունը մտրիլիզացիայի յենթարկել պայքարելու աշխատանքի կարողագործության և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար. սոցիալիստական մրցության և հարվածայնության հիման վրա, վճռականորեն պայքարելով տրանսպորտի աշխատանքը կազմալուծողների դեմ, տրանսպորտի բանվորների և ծառայողների ակտիվությունը և նախաձեռնությունը բարձրացնելով նույն տրանսպորտի աշխատանքի առողջացման, ռացիոնալացման և բարելավման համար:

21. Բարելավել տրանսպորտային բանվորների նյութական, կենցաղային և կուլտուրական սպասարկումը, վերացնել աշխատանքի վարձատրության «ձախ» հավասարեցումը, բարելավել մատակարարումը, սնունդը, բնակարանային պայմանները և կուլտուր-լուսավորական աշխատանքը:

22. Պայքարել բյուրոկրատիզմի, քաշքշուկի, հետամնացության, չարամիտների և տրանսպորտը ղեկավարող ապարատների դիմադրիկության, տրանսպորտի մեջ խժկված դասակարգայնորեն խորթ տարրերի դեմ: Յուրջ տալ գործնական աջակցություն տրանսպորտային ձեռնարկություններին և կազմակերպություններին՝ տրանսպորտի համար աշխատավորների նոր կադրեր ընտրելիս և պատրաստելիս:

23. Պայքարել տրանսպորտը հմտորեն և նպատակահարմար ոգտագործելու համար՝ տնտեսական և կոոպերատիվ հիմնարկների և կազմակերպությունների գծով, հանդիպական փոխադրությունների լիկվիդացիայի միջոցով վերացնել չարժակազմի ուչացումը, խիստ հակողություն սահմանել բեռնավորումների և բեռնաթափությունների ժամանակին հայտեր տալուն և այլն:

24. Պայքարել բեռների հափշտակման և տրանսպորտի վրա կատարվող այլ հանցագործությունների դեմ:

25. Աջակցել տրանսպորտին ժամանակին և լավո-

րակ կատարելու մ'յուս ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից իրեն տրված պատվերները:

26. Կազմակերպել մասսայական աշխատանք տրանսպորտի ձեռնարկություններում և հիմնարկություններում: Մասսայականացնել կուսակցության և կառավարության տրանսպորտի աշխատանքի հարցերի վերաբերյալ քաղաքի և գյուղի դժով կատարվելիք վորոշումները: Կազմակերպել խորհրդային շինարարության անկյուններ և այլն:

### 3. Ճանապարհա-տրանսպորտային սեկցիաների աշխատանքների մեքն ու մեքսդները.

27. Համաձայն վերոհիշյալ խնդիրների՝ քաղաքային և գյուղական խորհուրդների ճանապարհա-տրանսպորտային սեկցիաները՝

ա) Սեկցիաների և պատգամավորական խմբակների ուժերով կազմակերպում են արտադրական դրոհներ տրանսպորտի աշխատանքի կոնկրետ բնագավառներում, կամ թե ճանապարհային շինարարության վրա. կազմակերպում են տրանսպորտի և ճանապարհների վերանորոգությունը, նոր ճանապարհների հարվածային կառուցումը, լիկվիդացիայի յեն յենթարկում ճանապարհային հաղորդակցության ձեղքվածքները, կազմակերպում են բեռների բարձումը և թափումը տրանսպորտում, հաղորդակցության ճանապարհների մաքրումը ձյունի հյուսերից և այլն:

բ) Մամուլի որդանների հետ միասին թուուցիկ ստուգումներ են կազմակերպում թե արդյոք տրանսպորտային և ճանապարհային կազմակերպությունները տրանսպորտի հարցերի վերաբերյալ կուսակցության և կառավարության հրահանգները և տեղական խորհրդի վորոշումներն ինչպես են կատարել:

գ) Կազմակերպում ե թուուցիկ բրիգադներ հետադոտելու ճանապարհների տրանսպորտային ձեռնարկությունների ընդհանուր դրությունը, ինչպես նաև բան-

վորների նյութական, կենցաղային և կուլտուրական սպասարկումը և այլն:

Ընարում և բրիգադներ ստուգելու տրանսպորտային և ճանապարհա-շինարարական կազմակերպութ՝յունների աշխատանքի առանձին բնագավառը. զուգերթը, տնտեսական հաշվարքը, բեռնման և բեռնաթափման աշխատանքները, սպրանքների պահելը, ճանապարհներին սպասարկելը, աշխատանքի կարգապահութ՝յունը և աշխատանքի արտադրողականութ՝յունը, շինարարական աշխատանքների կարգապահութ՝յունը և շինարարական աշխատանքների համար սահմանված ժամկետները և կատարված աշխատանքի վորակը:

դ) Սոց-մրցակցութ՝յուններ և կազմակերպում յերկաթուղային գլխավոր և յերկրորդական կայարաններում ստուգելու բեռների լավազույն և արագ թափմանը, վառելանյութի և նյութերի ավելի տնտեսորեն ծախսելը, ներքին միջոցների լավազույն ողտադործման, շարժման, գրաՖիկների և բեռների լավազույն պահպանումը, կոլտնտեսութ՝յունների և դյուղերի կողմից ճանապարհային շինարարութ՝յան նկատմամբ ցույց տրված որինակելի վերաբերմունքը:

յե) Կազմակերպում են հսկիչ պոստեր, կայարաններում, դեպոներում, ճանապարհների կառույցներում՝ աշխատանքի դրութ՝յունը ստուգելու և դյուլթյուն ունեցող ճեղքվածքների և թերութ՝յունների մասին ահազանգ տալու:

զ) Կազմակերպում են շեՖություն՝ առանձին տրանսպորտային կազմակերպութ՝յունների և միավորների վրա՝ ձգտելով նրանց աշխատանքների դրվածքը դարձնել որինակելի, ճանապարհների առանձին տեղամասերում կազմակերպում են շեՖություն, կոնկուրս են անցկացնում լավազույն տրանսպորտային միջոցների և նրանց ղեկավարների համար:

ե) Հրավիրում են պատգամավորական լամբակների հավաքներ նվիրված տրանսպորտի, ճանապարհային շինարարութ՝յան և կապի հարցերին:


ը) Տրանսպորտային ձեռնարկություններում և խո-  
շոր ճանապարհային կառուցումներում անց և կացվում  
սեկցիաների նխատեր՝ պլանի կատարման, բանվորների  
մատակարարման և սննդի հարցերի վերաբերյալ և  
այլն:

թ) Տրանսպորտի աշխատանքի և ճանապարհային  
տնտեսության աշխատանքների բարելավման համար  
ներդրվում են նաև խորհրդի մյուս սեկցիաներին, աշ-  
խատելով վոր նրանք ցույց տան գործնական ոգնություն  
և ստեղծեն աշխատանքի նյութական, կենցաղային և  
կուլտուրական պայմանների բարելավումը:

ժ) Կապ են պահպանում այն խորհուրդների ճանա-  
պարհա-տրանսպորտային սեկցիաների հետ, վորոնց  
սահմաններում գտնվում են տրանսպորտի և ճանապար-  
հային գծամասի պատվերները կատարող ձեռնարկու-  
թյունները և հիմնարկությունները, աշխատելով, վոր  
այդ սեկցիաները ժամանակին և լավորակ կատարեն  
պատվերները:

28. Սեկցիաների բյուրոնները յեղնելով տեղական  
պայմաններից, պետք և հայտնաբերեն սեփական նա-  
խաձեռնություն և նրանց աշխատանքի թվարկյալ ձևե-  
րի կիրառման հետ միասին՝ գտնեն տրանսպորտային  
սեկցիաների աշխատանքների և այլ իրական ձևեր և մե-  
թոդներ:






# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏՐԱՆՍԴՈՐՏԻ ՅԵՎ ԿԱԴԻ ԱՆՈՆԱԴՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԼՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 22 ՓԵՏՐՎԱՐԻ 1933 Ք  
ՆԻՍՏՈՒՄ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹ. № 5/50) .



## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Յ Յ Ո Ւ Ն

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՅԵՎ ԿԱՊԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

Խմբակի կազմակերպչական կառուցվածքը

1. Պատգամավորական խմբակները կազմակերպվում են բոլոր տրանսպորտային ձեռնարկություններում (յերկաթուղային կայարաններ, դեպոներ, արհեստանոցներ, խճուղային վարչություն, դիտանցիաներ, դժամասեր և այլն) փոստ-հեռագրական ձեռնարկություններում ու ուղիւ կայաններում և այլ հիմնարկություններում, վերոնշյալում են քաղաքային և դյուրակախ խորհուրդները տերիտորիայում: Սմբակը միացնում է խորհրդի անդամներին և խորհրդային աշխատանքի մեջ տրանսպորտական բանվորների ակտիվին, ձեռնարկի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և մատնանշված ձեռնարկությունների բանվորական ակտիվը:

2. Սմբակի ամենուրյա աշխատանքը ղեկավարելու համար պատգամավորական խմբակի ընդհանուր ժողովում ձեռնարկության-հիմնարկության, խորհրդային ակտիվի հետ միասին ընտրվում է 3—5 հոգուց բաղկացած բյուրո: Սմբակի բյուրոյի անդամների աշխատանքը համարվում է ձեռնարկության հասարակական բեռնըվածություն:

Մանրթուքյուն.— ա) Բյուրոյի անդամներն ընտրվում են խմբակի ընդհանուր ժողովում—պլենումի անդամներից:

բ) Բյուրոյի կազմի մեջ պարտադիր կարգով մտնում է տեղկոմի ներկայացուցիչը:

դ) խմբակի թիվը 10-ից պակաս լինելու դեպքում (խորհրդային ակտիվի հետ միասին) բյուրո չի ընտրվում, իսկ նրա աշխատանքի ղեկավարութունը դրվում է կամ խորհրդի լիազորի վրա կամ թե խորհրդի անդամներից մեկի վրա, վորն աշխատում է տվյալ ձեռնարկության մեջ:

3. Պատգամավորական խմբակի բյուրոյի պարտավորութունների մեջ մտնում են խմբակի անմիջական ղեկավարումը, խորհրդի պատգամավորները և խորհրդի ակտիվի կազմի հաշվառումը և բեռնվածությունը, խմբակին մասնակցողներին անհատական և կոլեկտիվ առաջադրություններ տալը, վերջիններիս վորակի և աշխատանքների կատարման ժամկետների հաշվառումը, խմբակի ընդունած վորոշումների կատարումը և ձեռնարկության մեջ նրա կատարած աշխատանքների արդյունքների, խորհրդային աշխատանքի լավագույն ձևերի և մեթոդների ուսումնասիրությունը և կիրառումը ձեռնարկություններում, խմբակի աշխատանքի պլանների կազմելը, ընդհանուր ժողովներ հրավիրելը, իրագործումը, ձեռնարկության յեռանկյունու հետ կապված ինչպես նաև խմբակի աշխատանքը տեղական կոլտակցական, արհմիութենական և հասարակական կազմակերպությունների աշխատանքի հետ կապակցելը:

4. Պատգամավորական խմբակի աշխատանքի ղեկավարությունը և հրահանգումը կենսագործվում է քաղաքային և դյուղական խորհուրդների միջոցով:

5. Պատգամավորական խմբակները ժամանակին ահազանգում են տրանսպորտի և կապի մարմիններին, աշխատանքների ճեղքվածքների և աղավաղումների մասին, խորհրդի նախադահության առաջ դնում են այն հարցերը, վորոնք անհապաղ լուծում են պահանջում:

6. Պատգամավորական խմբակի այն առաջարկությունները և վորոշումները, վորոնց դեմ ձեռնարկության վարչությունը չի առարկում, կատարման համար պարտադիր են. տարածայնության գեպքում վիճելի

Հարցը սեղանի վրայ դրած է խորհուրդ և այլ վերադաս  
մարմիններ՝ ի քննութիւն:

7. Սորհրդի յուրաքանչյուր պատգամավոր, բացի  
ձեռնարկութեան խմբակի աշխատանքներում ակտիվ  
մասնակցելուց, պարտավոր և խորհրդի սեկցիաներում  
ևս վորոշ աշխատանք կատարել:

Պատգամավորակաց խմբակների խնդիրները տրանս-  
պորտի և կապի ձեռնարկութիւններում

8. Պատգամավորական խմբակները հանդիսանա-  
լով խորհրդի մասսայական աշխատանքի սխտեմում  
պատասխանատու ողակը, գործնականապես մասնակից  
են դարձնում տրանսպորտի և կապի բանվորներին ձեռ-  
նարկութեան արտադրական գործի կառավարմանը,  
ոչտադործելով բանվորների ստեղծագործական ուժերը,  
յեռանդն ու նախաձեռնութիւնը և դրանք մորիլիզա-  
ցիայի յենթարկելով սոցիալիստական շինարարութեան  
ժամանակավոր դժվարութիւնները հաղթահարելու  
համար:

Այդ ամենի համար պատ-խմբակները պետք և իրենց  
առաջ դնեն հետևյալ հիմնական խնդիրները՝

ա) Աշխատանքի կարգապահութեան և արտադրո-  
ղականութեան բարձրացումը, սոցիալիստական մրցակե-  
ցութեան և հարվածայնութեան ամրապնդման և հետա-  
պա ծավալման հիման վրա, պայքարելու յեն բանվորա-  
կան ուժի հավաքի ճիշտ կազմակերպման և դասավո-  
րութեան ինչպես և աշխատանքի վարձատրութեան հա-  
վասարեցման ու արտադրութեան կառավարման դիմա-  
պրկութեան լիկվիդացիայի համար:

բ) Յուրջ տալ գործնական աջակցութիւն տրանս-  
պորտի և կապի աշխատանքի վերակառուցման և առող-  
ջացման բնագավառում կուսակցութեան և կառավարու-  
թեան դիրեկտիվներին կենսագործմանը արժատացնելով  
ձեռնարկութեան մեջ իսկական տնտեսական հաշվարք,  
այդ բանում պայքարելով անտնտեսավարութեան դեմ,

ցույց տալով տրանսպորտի և կապի տնտեսութեան, սարքավորման, մեքենաներին, ինչպեստարին հողատար վերաբերմունք և այլն, խիստ տնտեսելով ծախսերը, միջոցները, նյութերը, վառելանյութի և ներքին միջոցները:

Աջակցել՝ վերացնելու տրանսպորտի և կապի աշխատանքի տեմպերի ընդհատումները, վիժումները և հետ մնալը, կատարել և գերակատարել արտադրական պլանները ժամկետից առաջ և լավորակ, բարձրացնել արտադրական խորհրդակցութեանները ակտիվութեամբ՝ յերկաթուղային, անուշա ճանապարհների և ջրային տնտեսութեան գործի իրացման և վերակառուցման մեջ ցույց տալ ստեղծագործական նախաձեռնութեան:

գ) Տրանսպորտի և կապի բանվորների նյութական-կենցաղային և կուլտուրական սպասարկման բարելավումը՝ փակ բանվորական կոոպերատիվների, ճաշարանների մատակարարման և սննդի վորակի բարելավման, լայն սպառման միջոցների և սպրանքների բաշխման սխստեմի լավազույն կազմակերպման, բանվորական մատակարարումը կազմալուծողների դեմ պայքարելու միջոցով. բնակարանային շինարարութեան կազմակերպման, ձեռնարկութեան և սոց. կենցաղային կարիքները սպասարկող կազմակերպութեան մեջ վերահսկողութեան կենսագործման և գործնական ոգնութեան ցույց տալու միջոցով, մերձ-քաղաքային տնտեսութեան, բանջարարութեան և ճաշարարութեան զարգացման և այլն:

դ) Տրանսպորտի և կապի ձեռնարկութեանները մեջ խորհրդային մասսայական աշխատանքի կազմակերպումըն այն ձեռնարկութեանները բանվորներին, հարվածայիններին ներգրավելու հիման վրա, վորոնք մրցակցում են խորհրդի սլատաամավորական խմբակների և սեկցիանների աշխատանքի մեջ, դնել բանվորական ժողովներում առանձին անհատների, բաժինների և խորհրդի սեկցիանների հաշվետվութեանները խորհրդի կարևորագույն վորոշումների մասսայականացումը, ընտ-

բողոքների նախընտրական հրահանգների կազմակերպումը և նրանց կատարման ստուգումը պատգամավորների հաշվետվությունների դրվածքը, կոնսուլտացիոն աշխատանքի կազմակերպումը, խորհրդային աշխատանքի հարցերի վերաբերյալ բողոքների ընդունելությունը և այլն:

Պատգամավորական խմբակների առաջ դրված և խորհրդային ակտիվի կողմից միավորվող խնդիրների կատարումը տեղի յե ունենում խիստ կապակցված տեղական կուսակցական կազմակերպությունների ղեկավարութեամբ և արհմիությունների աջակցութեամբ:

Պատգամավորական խմբակների աշխատանքի օւերը և մեքոդները տրանսպորտի և կապի օնոնարկութեան ներում:

Գ. Յույց տալով արանսպորտի և կապի ձեռնարկութեան բանվորներին արտադրական առանձին առաջադրանքների կատարման ընդորինակման արժանի վերաբերմունքի որինակները և կիրառելով ձեռնարկութեանների պատգամավորական խմբակների կողմից խորհրդային մասսայական աշխատանքի մեթոդները՝

ա) կազմակերպում են բանվորների անհատական և կոլեկտիվ մրցականչեր՝ սոցիալիստական մրցակցութեան և հարվածայնութեան համար:

բ) Սորհրդի անդամներից և ներգրավածներից կազմակերպում են հարվածային բրիգադներ՝ առանձին առաջադրութեանների կատարման համար:

գ) Հայտնաբերում են լողորներին, գործալքիչներին և աշխատանքի կարգապահութեան այլ կազմալուծողներին՝ գործնական ոգնութեան ցույց տալով տեղական կազմակերպութեաններին և վարչութեաններին՝ արտադրութեան մեջ նման յերևույթների դեմ պայքարելու գործում:

դ) կազմակերպում են շեֆութեան և որինակելի յենդարձում առանձին ցեխերին, նավահանգիստների, շոգեշարժերի, նավերի աշխատանքը:

յե) Անցկացնում են լավագույն բրիգադի, բրիգադիբի, վարպետի, մեքենավարի, մեխանիկների, շոգեշարժի-նավի շոֆերների, նավաստիների, յերկաթուղայինների կոնկուրսները:

զ) Ստուգել պոստերի կազմակերպումը մարդատար և ապրանքատար գնացքների կայարաններում, դեպոներում, նավահանգիստներում, ճանապարհների գծամասերում, Հայտրանսի կետերում, նրանց միջոցով կենսագործելով գնացքների, նավերի յերթի գրաֆիկայի, բեռնման, բեռնաթափման հսկողութունը:

ե) Կազմում ե բրիգադներ՝ կուսակցության և կառավարության տրանսպորտի հարցերի, բանվորներին նյութական-կենցաղային պայմանների բարելավման, ընկ. Ստալինի 6 ցուցմունքների վերաբերյալ կուսակցության և կառավարության հատուկ վորոշումների կատարման ստուգման և այլն, հայանաբերելու և ոգտագործելու ձեռնարկությունների ներքին միջոցները, ստուգելու վառելանյութի և նյութերի ծախսման ճշտությունը:

ը) Սորհրդի անդամներին և ներգրավվածներին ամրացնում ե տրանսպորտային առանձին միավորներին՝ ստուգելու և ոգնելու դիմազրկության լիկվիդացիայի, տնտեսական հաշվարկի փոխադրման գործին և այլն:

թ) Ձեռնարկության համար պատվերներ կատարող գործարանների պատգամավորական խմբակների առաջ հարց ե դնում պատվերներ վերցնելու և պատվերները լավորակ և ժամանակին կատարելու շեֆությունը:

ժ) Ձուկում ե ակտիվիստներ, վորոնք միշտ պետք ե մասնակցեն և ոգնեն արտադրական խորհրդակցության աշխատանքին:

ի) Բանվորների մատակարարման և սննդի բարելավման մերձ-քաղաքային տնտեսության ուղղությամբ ցույց ե տալիս նախաձեռնություն:

լ) Տույց ե տալիս ակտիվ մասնակցություն՝ տնտե-


սական-քաղաքական կամ պանիաների և փոխառու-  
թյունների տարածման համար և այլն:


խ) Բանվորական ժողովներում կանոնավոր հաշիվ  
և տալիս իր և խորհրդի յուրաքանչյուր անդամի աշխա-  
տանքների մասին. դնում և աշխատանքի ընդունակ  
պատգամավորների և սեկցիայի անդամների դնահատ-  
ման մասին հարցեր.

ծ) Ընտրողներին պատի թերթի, դրույցների, խոր-  
հրդակցությունների միջոցով հայտնում և խորհրդին  
դրված հրահանգների կատարման մասին.

10. Պատգամավորական խմբակն յեղնելով իր ձեռ-  
նարկության աշխատանքի պայմաններից՝ պետք է ցու-  
ցաբերի սեփական նախաձեռնություն գտնելու աշխա-  
տանքի ավելի լավ և գործոն ձևեր և մեթոդներ:







ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

034.

A <sup>II</sup>  
24241

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրա



FL0002116